

աղօթարանն Դաւթի, եւ որոնեալ եգիտ զվէմն՝ զոր կոչէին Սեբեոյ ծածկեալ յաղբիւսի, եւ սկսաւ Օմար մաքրել զտեղին քղանձիւ հանդերձի իւրոյ, եւ լնոյր զհողն ՚ի զոգս իւր եւ ընկենոյր արտաքս. տեսեալ զօրականին եւ ամենայն այլազգեաց որք ընդ նմա, արարին եւ նօքալստ օրինակի նորին, եւ մաքրեալ զտեղին հրամայեաց Օմար կանգնել մզկիթ ՚ի վերայ վիմին, եւ կոչեցաւ Մշէթ Օմարոյ, եւ ՚ի մաքրելն զտեղին կոչեցեալ ՚ի հնունն Սրբութիւն Սրբոց, զոր ինքեանք կոչեն Աբաս, գաին անդ զպատկերս քրիստոնէից, բայց գոլով նօքա գայթակղութիւն Իսլամաց՝ կորուսին զայնս:

Այսպէս տիրեաց Օմար Երուսաղէմի ՚ի թուին Հիճրէթի 10 (636) յետ պաշարելոյ զայն զամիսս չորս, եւ բարձաւ իշխանութիւնն Յունաց յաշխարհէն Պաղեստինացոց եւ մօին քրիստոնէայք ընդ լծով հարկի ծառայութեան Արարացոց: Զայստիկ, որպէս եւ զայլ դէպս որ զինի, թարգմանեցաք ՚ի սլաւմութենէ Արարացոց որ կոչի Ինտել-ձէլէլ Բարիէլ եւ Համդէլ: Հար. Ա. Երեւ. 224: Սակայն ՚ի տեղին կոչեցեալ Սրբութիւն Սրբոց, որպէս գրեցաք, կառուցեալ էր Յուստիանոս Կայսր եկեղեցի՝ յանուն Ընծայման սրբոյ Կուսին Մարիամու, զոր թերեւս փոխեցին ՚ի մզկիթ:

Յուստիանոս Արարացի պատմիչն թէ Օմար անուանեաց զմզկիթն զայն Հարաֆ Ներիֆ եւ զտաճարն Ս. Յարութեան կոչեաց ֆրճաֆ, որ է աղբանոց. զի Հրէայք առ տեղութեան զոր ունէին առ Քրիստոնէայս, ասէ արարեալ էին զտեղի տաճարին աղբիւս. եւ մինչեւ ցայսօր յամի ՚ի բերանս եւ ՚ի գրուածս այլազգեաց բառք ֆրճաֆ:

Իսկ ՚ի հայկական ձեռագիրս ուր գտանին հատուկտոր բանք վասն դաւառեան Օմարայ եւ գործոց նորին՝ նշանակեմք աստանօր: Օմար-Իպն-Խաթիթալ յետ լսման Դամասկոսի՝ եկեալ պաշարեաց զԵրուսաղէմ, եւ Պատրիարքն Սոֆրոնիոս չօքաւ առ նա եւ անձնատուր եղեւ, եւ Օմար ետ գիր ՚ի ձեռս նորա օրինակ զայս: Յանուն Աստուծոյ դթածին եւ ողորմածին, յՕմարայ որդւոյ Խաթիթալայ առ բնակիչս Երուսաղէմի. որպէս զի ապահով եւ անկասկած լիցին վասն արեանց զուսկաց, ընչից եւ եկե-